

Մ Ա Յ Ր Դ Ի Ւ Ա Ն

ՄԽԻԹԱՐԵԱՆՑ ՎԵՆԵՏԿՈՅ. - Ի Ս. ՂԱԶԱՐ

(Չար. տես թագմ. 1926, էջ 158)

Ճ Խ Թ.

Կ'ալու որ հրատարակենք հոս Հ. ՎՐԹԱՆԻՍԻ հետեւալ տեղեկութիւնները, ուր դարձեալ պիտի նշանակենք Հոռվամայ մէջ Հայոց ձեռց բերած բարի անունն ու վայելած համակրութիւնը։

Ամենապատի և գերյարգոյ տեսան տեսան Ստեփաննոսի
վարդապետի և արքայ հօր մերոյ

... այսօր յերեկոյ զնացար յուտել զի՞նթրիս ուխտաւորաց ինն անձնութ և եթ բովանդակ մեծամեծք. և լուային անդ զմեր ուս, զորոյ մի ըստ միոչէ պատմել զկարեմ այժմ. և ապա արարաւ վասն մեր խախութիւն այլազգ քան գհասարակացն, ուր ի սպասու կային մեծամեծք, և զլուի նոցա ամենեցուն երկելի ոմն իշխանազուն եպիսկոպոս, զորոյ սիրոյն և զմարդասիրութենին ի յնդանին զմեզ և ի ծառայել՝ ոչ կարեմ պատմել, նոյնպէս և զայոց մեծամեծացն։ Լոււալ կարտինալ կարաֆային պաշտպանի ազգին մերոյ եթէ եկեալ են ուխտաւոր հայոց ի յընթրիս, եկի թօրիգօք և բազում սպասարօք, սպասարօք մերոյ սեպանս, և կիսասաման կացեալ անդ, որպէս և այլ իշխանազութ բազումք, սպասարօքէին այնախի խոնարիստեամբ, որպէս ոչ ծառայէ արծաթազին ոք ծառայ. և եղի նոնդութիւն բազում յոյժ, և ըստ բանի աւեսարանին, ամենեցուն որք ի ժողովոգեանն էին աշք ի մեզ հայէին. էր ընդ մեզ և սինիօր լածարոն, որ առաջնորդէր մեզ յանձնային. որոյ ազգարարութեամբ ամենեթի միաբան արբար գինի վասն կենաց կարտինալ կարաֆային, և մօնինիօր կրպային, որք ծառայէին մեզ, որք և ուրափ եղեն յոյժ. նորա ընթերցան գօրնութիւն սեղանոյ մերոյ և յեզերին զգուռութիւնն ծու յեզերին յուլարկեցին զմեզ թօրիգօք յեկեղեցին այնր օսքիտալի ուր եղեալ էին զորբութիւն քառասուն ժամու, և յետ այն, ի տան մեր Վաղին հանդերձեալ եմք զնալ ի սեղան Պապինւս...

Յամի տեսան 1761

յունվ. 3 [Հոռվամ]

Նուաստ ծառայ

Հ. ՎՐԹԱՆԻ Վ. [Ասկէրեան]

ՃԾ.

Վենետկոյ Հայոց Ա. Խաչ եկեղեցւոյ հոգարարձութիւնը Միիթար Արքահօք կենդանութեան ատեն ինչ ինչ պարագաներու մէջ միայն ստիպուած վարեր էին Միաբանութեանն անձննը։ Մելգոննեանի ժամանակն է որ Ռիխտ կանոնաւորապէս կը ստանձնէ անոր հոգարարձութիւնը, որ ցարդ կը շարունակուի։

Հոս պիտի ներկայացնենք նոյն ինչն յիշեալ Գերյ. Նամակազրին հեղինակաւոր տեղեկութիւնները այս ակզրնաւորութեան մասին. ծանօթութիւններ՝ որոնք ստուգին նորութիւններ են ի նպաստ անոր պատմութեան։

իւս

**Վերապատուելի հօր մերում Զարարիայ վարդապետին
ողջյուն բակում յոյժ**

... մուտ արարաք ի հայոց ժամի յաւուր վերափոխման սուրբ աստուածածնին, Եւ առաջեցի նոցա քարողի մասնաւոր ի մերոց, և ժողովիւ գրեթէ ամենայն հայոց յեկեղեցին՝ տուաւ նոցա քարոզ յազագո միաբանութեան՝ յաւուրս երկուս ընդ ժամն ձիզս. այնչափ, մինչն ժողովուրդն լուծաւ, մեղացաւ, միաբանեցաւ, զարձեալ կարկատեցաւ բազմապատակ հերձումն նոցա, և անպատմելի ընծութեամբ խայտային. մինչն շուտժեալ յանձնին՝ գրեթէ ամենայն հայր մեծամեծը և փոփուկ միաբանեալ եկին ի վանս մեր՝ և արարին միմանց զհասարակաց խրախնան՝ ի գրքատան մերում, առ չտանելոյ սենեկաց զբազութիւնն. կոչեալ էին ընդ ինքեանս և զերկոսին զեպիսկոպոսունս մեր գրինաս և զարգիս, որք և նոցա պատակտեալը էին ի միմանաց և ոփացեալք, և զտան ըստ տնօրինելոյ տեառն հասարակաց քարոզութեանն ներկայ, և տերամբ շահեցան յոյժ. զի և նոցա հաստեցան լւ, գարձեալ առաքեցի զբարողի մասնաւոր ի ծնընդեան սուրբ աստուածածնին, որ արար նոցա ներբուժեան մեծ՝ զուրբ աստուածածնէն՝ ներկայութեամբ սարգիս գարդապետին և բաղանօթ մինսա վարդապետին, զի փափագէր ներկայ գտանի և ինքն. բայց՝ ի կոմիթիտաց գիշերին ախտացան իրեաց նորա. զի եկն պատահական ուռոյց ինչ է արգելայ, և ժողովուրդն լուսեցաւ զեկեղեցնեալ. և տեառն գործակցութեամբ մեծապէս շահեալ՝ խայտային, և փոխեաց զնոսա տէր գրեթէ յայլ մարդ. և ասեն. այժմ իմացաք, թէ ունիմք մեր հայքո ի վէնչտիկ զվանիք...

Յամի Տեառն 1751

Սեպտեմբերի 11
[Վենետիկ]

Նուաստ ծառայ

Ստեփանոս Վ. Պ. Աբրահամյ

ՃԾԱ.

Վիեննական Հարց « ՅՈՒՇԱՐՉԱՆ » ի մայն էջը (3), ուր Միխարեան տիտղոսին շուրջ յերիւրուածոյ պատմութեան հիմնական սրբազրութիւնն ըրինց, կու տայ մեզ դեռ ուրիշ ամենակարեւոր հարց մը. հիմայ՝ կարգն է՝ որ այդ ալ գտնէ իւր արժանաւոր լուսարանութիւնը, քանի որ մեր գաւերաթուղթերու շարբը զայս կը բերէ: Նախ պէտք է զիտանալ, թէ հաւաեալ՝ թուղթին ստորագորդը նիկողայոս լերպար՝ Հաւատոյ Տարածման Ս. Ժողովի Քարտուղարն է, որ կարեւոր հարցումներ կ'ընէ Հայ Միհական գրեթեու մասին, գոյութիւն ունենալով այս շրջանին՝ Հայ ծէսը լատինականէն բոլորովին զտելու տեսակետ մը:

Սոյն նամակին մէջ՝ իր գլխաւոր նիկոթին զատ՝ կայ նաև իիստ նշանակելի կէտ մը յանձնի Գերյ, Մելգոնեան Արքահօր, առ որ այսպէս կ'ըսէ Մոնս. Լերգար. «Alle quali Ella degnamente presiede» («որոց [Ս. Ղազարու Հարց] արժանապէս նախարարակմեալ է»), թէ՛ զնել, որ թուղթն գրուած է 1751 Դեկտ. 18-ին:

Բայց տեսնենց ինչ կը զբն վիեննական Հարց « Ակնարկ մը Վիեննական Միխարեան Միաբանուրեան Հարիւրամեայ գործունեուրեան վրայ » վերնագրին տակ. « Միխթարայ մահուընէ տարի մ'ետքը ընդհանուր ժողովով (6 Ապրիլ 1750) կ'ըն՝ « տրուփ Միաբանութեան ընդհ. Արքայ՝ Հ. Մտեֆանոս Վ. Միլըոնեան,

« Մելգոնեան իր ընտրութիւնէն ցիշ ետքը ձեռնամուի կ'ըլլայ երանաշնորհ « Հիմնագրին սահմանած կարգերը փոփոխեն. սակայն իւր այս նորամանութիւններով « յառաջ կը բերէ երթագոյն միանձանց մէջ զգանութիւնն. իօթը տարի կը հետպահնդէ ի զուր իւր կազմած Մահմանադրութիւնը Հոռոմ հաստատել տալ, մինչն

« օր օր աւուր անող զգոհութիւնը կը ստիպէ միաբանները՝ ընդհանուր ժողով մը « գումարել, 1772 Մայիս 25-ին կը բացուի ժողովը. ուր կը հրակրուի նաև Արք « բահայրը (տակածին ինաստառուած Հոռմէ՛) ...» : Կանգ կ'առնենք հու:

Զանց ընելով մի առ մի հերցումը անհիմն մէջերումին՝ որ կը մաքափի յայտնի ճշմարտութեան դէմ՝ կը բաւականանանք ըսեւ, թէ կարելի չէ չաեսնել մասնաւոր թագուն դիտաւորութիւն մը նկատմամբ փակազծեալին՝ զոր մենց ընդգծեցինց:

Զենց վարանիր ըսելու, թէ յիրափ Վիեննական Հարբ ծայրագոյն յանդղութիւն մ'ըրած են, յայտարարելով զՄելգոնեան Արքահայր իր ընտրութեան Թուականէն (1750 Ա.Վրիլ 6) մինչեւ 1772 Մայիս 25 իրեւ և տակամին ինաստառուած Հոռմէ՛, այսինքն թէ Մելգոնեանի արքայութեան շրջանի առաջին 22 տարիներու վաւերական և օրինաւոր իշխանութիւնը յայտնապէս իրեն զլանալէ վերջ՝ տարակոյսի տակ կը թողուն 1772-ի յաջորդող տարիներէն զեռ մաս մը ևս, այդ ամքորջ ժամանակամիջոցին մէջ զեռ լի. Աթոռէն չհաստատուած նկատելով, Դժուար չէ իմանալ անշուշտ այդ առեղծուածային շրջանին մէջ լոկ իրենց մէկ արդարացումը հետապնդելու զոր շանքը:

Ճշմարտութիւնը երեան հանելու և միանգամայն ներկայ Միիթարեան սերունադէս որդիկական յարգանք մը մատուցանելու համար հանդէս Միիթարայ Լուսահողի թաջորդին՝ կը թուենց հոս կարգ մը հեղինակաւոր վկայութիւններ, որոնց ջախջախիչ փաստեր են Վիեննական Մեծյ. Հարց տուած սին զնո՞յն դէմ:

1. — Վատիկանու Դիւանապետը մեծանուն Giuseppe Assemani, Հոռմէն 1751 փետր. 26 թուակիր թուզբ մը կը դրէս առ Մելգոնեան, կոչելով զանիկայ « Abbate Generale » — Ընդհանուր Աթոռահայր:

2. — Մոնս. Լերզար Քարտուզար Ֆաւալոցի Ժողովոյն, 1751 Մարտ 6-ին թուզբ կը դրէս լ. ժողովոյն պաշտօնական կնիքով, Միաբանական գործերու խնդրոյ մը համար, և կը կոչէ զՄելգոնեան Abbate Generale.

3. — Մաւալոցի Նախազան Ելիբանաւոր Քարափա Միաբանութեան և Ազգիս հանդէպ սիրոյ և բարեացակամութեան թուզբ կը գրէ 1751-ին առ Մելգոնեան՝ Abb. de monaci Armeni... ափառոսով:

4. — Աւրիշ Նախազան մը Մաւալոցին՝ Ելիբանաւոր Վալէնդի՛ իր և ժողովի Քարառարին ստորագրութիւններով 1751 Նոյեմբեր 17-ին հարցում մը կ'ուզզէ Աստուածաշունչի տպագրութեան մը մասին առ Մելգոնեան, անուաննելով զայն Ab. de monaci armeni...

5. — Վենետիկոյ Հասարակապետութեան քով Արքագան Պատիկին Դիսապանը Քաղկեդոնի սիրտոսաւոր Արքեպս. Marinus Iznicus, իր և քարտուզարին ստորագրութիւններով 1751 Գեկտ. 7-ին հրամանագիր մը կ'ուզզէ առ Մելգոնեան, կոչելով զայն Abbas et Superior actusalis Monachorum Armenorum Congregationis:

6. — Պոլսէն Լատինաց Առաքելական Դիր Աթոռակալը Biagio Paolo (ապա Առաք. Աթոռկ.) 1750 Յունիս 15-ին ուրախակցութեան թուզբ կը դրէս առ Մելգոնեան:

7. — Աւրախակցութեան թուզբ կը դրէս նաև Պոլսէն Ազգային Միսարինարաց զիսաւորը Եղիա Վարդապետ Գալատացի, 1750 Յուլիս 1-ին, Մելգոնեանի ընտրութեան առթիւ:

8. — Աւրախակցութեան բառեր կը խառնէ Մոնս. Լերզար՝ առ նորընտիր

1. Անգ., էջ 8-4.

Մելգոնեան Արքայն՝ 1750 Մայիս 9-ին գրած թուղթին՝ ինչպէս և ուրիշ մէկ երկու թղթերու մէջ:

9. — Կնիքը այս ամէնուն՝ իսկականը ծառուցանենը, թէ Մելգոնեան իր Արքայութեան վաւերագան հաստատութիւնը կ'ընդունի իր ընտրութեան օրերէն, այն է 1750-ին, եթ 02 Թէ 1772-ին՝ ըստ քամածին և անհիմ յայտարարութեան վիճեանայի Միխիթարեանց «Յուշարձան» ցի:

Ըստրութեան և հաստատութեան գէպը տեղի ունեցած է հետեւալ օրինաւոր կարգով:

Միխիթարայ սգաւոր որդիք կը հաղորդեն Եր. Հիմնազրիս մահը առ Ս. Աթոռ, և կը խնդրեն անկէ հրաման՝ նոր Արքայի ընտրութիւն կատարելու։ Առ այդ ի պատասխան՝ Հաւատոյ Տարածման Գահերէց Միհրանաւոր Վալէնդի՝ իր և Փողովոյն Քարտուղար Լերզարի ստորագրութեամբ 1750 Փետր. 18 թուակիր պաշտօնագրով մը հրամանգ կու տայ վենեսեկոյ Հասարակապետութեան բով եղող Քահանայապետական Գիտպանին, Ս. Ղազարու Հարց հաղորդելու Արքայի ընտրութեան հրամանը։

Հուսկ, ընտրութիւնը տեղի ունենալէ վերջ, արդիւնքը կը հաղորդուի ի Հոռվմ. և ահա միւնոյն Ս. Փողովը 1750 Ապրիլ 25 թուակիր ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԹՂԹՈՎ. կը վաւերացնէ Մելգոնեանի արքայութիւնը։

Դառնալով Մոնս. Լերզարի հետեւալ նամակին՝ կը հաղորդենք որ իտալական բնագրէն թարգմանած է Հ. Անտոն Պաղտասարեան։

Գերապատիք Հայր, Տէր մնժարելի

Շնորհաւորելով ինձ զսուըք ծնունդն քրիստոսի, Հայրութիւնդ Գերապատիք կամեացաւ մատուցանել ինձ զնոր նշանացոյց սիրոյ և մարդավարութեանց Վասն այնորիկ զյափագոյն շնորհակալութիւնս ինքնանդ մատուցանեմ, ոչ իմիր առաւել բաղադալով, քան առթութեանց ծառայելոյ ի նպաստ անձինք։

Եւ զոր օրինակ նենչաց փափազանօր գործակից լինիլ ո՞շափ ինձ կարելի է հոռ գեր օգտին արաման ազգին, առ ունիմ զմիր ինչ յատուկ յօժարամտութիւն յաշ գազ ընական դիրուուտամութեան նորուն, այսուս ցանկամ լինիլ ի Գերապատիք Հայրութիւնէ թոեկացուցեալ, եթէ այդրոքի Միհրանունդի, որոց ինքնդ արժանապէս նախարագմեալ է վարին այնորիւք ինք քրեամքը եկեղեցականօք, որովք վարին Աշխարհակեաց քահանային և Նախկոպատունին նոյնոյ Ազգին։ Դարձեալ միթէ ի Մենաստանիդ գտանին ծեռագիր օրինակ ժամագրի, Մաշտոցի, Զենապութեան զգի, և այլոց Եկեղեցական զինեան Հայոց։ Զի մինչ ոչ է ի լոյս ածեալ տպագրութեամբ Արքոյ ժողովոյս, եթէ ոչ կանոնն պատարագին Հայոց, ես ի մէջ առնուի զնպաստաւոր ինչ պարապ աղաշելոյ զԱրքութիւնն Տեառն մերոյ Պապին, ի հանիլ յանձնել հմուտ և իմացուն անձանց ի շոօմ զննութիւն վերյասացեալ զրեանցն, և զնել զնոսին ի կապւաթեան լինելոյ տպագրեալք։ Այսոցիք տեղեկութեանց սպասեալ մնամ առ ի ծանուցեալ ընդունակութենէ և նախանձաւորութիւնն Հայրութեանդ Գերապատիք։ Եւ հանգերձ բուրով ճշմարտագոյն պատուագրութեամբ զիս հաստատեմ Հայրութեանդ Գերապատիք

Ի Հոօմ Ժ. Դեկտ. ո. չ. ծա. [1751] թվու. քրիստոսի

Զերմեռանդաբարենթ, Արքունական Զերմեռանդաբարենթ
Նկողոջյու Երգարի

(Հարութեանդի)

Հ. Ղութան Տասեսն

1. Բնագերը պահուած է Հայերէն թարգմանութեամբ միասին Մայրավանցիկի հիմքն աբ.